

021503.00.6 Թատերական արվեստ

021503.01.6 Դերասանական արվեստ (դրամատիկական թատրոնի և կինոյի դերասան) մասնագիտության գծով բակալավրի կրթական ծրագրով ԵԹԿՊԻ-ի դիմորդը հանձնում է չորս քննություն.

1. Դերասանի վարպետություն
2. Բեմական խոսք
3. Հարցազրույց
4. Հայոց լեզու, գրականություն (ոչ մրցութային)

Դերասանական արվեստ (դրամատիկական թատրոնի և կինոյի դերասան, երաժշտական թատրոնի դերասան) մասնագիտության գծով դիմորդները պետք է ունենան անհրաժեշտ բեմական արտաքին, անթերի առողջանական տվյալներ, բեմական ձայն, կերպարային մտածողություն, կյանքի երևույթների և արվեստի ստեղծագործությունների գաղափարական, հուզական բովանդակությունը տրամաբանորեն ընկալելու և վերարտադրելու կարողություն (կամ դրանց զարգացման նախադրյալներ):

Դերասանի վարպետություն քննության պահանջները և գնահատման չափանիշները

(պետք է ներկայանալ մասիկներով, տրիկոյով).

- ✓ Էտյուդ (նախապես պատրաստած՝ տևողությունը մինչև 3 րոպե)՝ 0-8 միավոր, Էտյուդ երաժշտության ներքո (երաժշտական թատրոնի դերասան մասնագիտացման համար)
- ✓ մենախոսություն պիեսից (նախապես պատրաստած)՝ 0-5 միավոր,
- ✓ պար (պլաստիկա)՝ 0-3 միավոր,
- ✓ ռիթմիկա՝ 0-2 միավոր,
- ✓ բեմական հմայք՝ 0-2 միավոր:

Բեմական խոսք քննության պահանջները և գնահատման չափանիշները (աղջիկները պետք է ներկայանան շրջագգեստով կամ կիսաշրջագգեստով).

- ✓ առակ (չափածո)՝ 0-5 միավոր,
- ✓ արձակ՝ 0-5 միավոր,
- ✓ բանաստեղծություն (քնարական և խրոխտ)՝ 0-5 միավոր,
- ✓ վոկալ տվյալներ և երաժշտականություն՝ 0-5 միավոր:

Հարցազրույց քննության պահանջները և գնահատման չափանիշները.

- ✓ դրամատուրգիական երկի իմացություն և վերլուծություն՝ 0-7 միավոր,
- ✓ արվեստագետի ստեղծագործական-կենսագրական դիմանկար՝ 0-3 միավոր,

- ✓ հարց համաշխարհային մշակույթի պատմությունից՝ 0-5 միավոր,
- ✓ իմպրովիզացիա (հարցեր դիմորդի երևակայությունը, տրամաբանությունը, արագ կողմնորոշվելու և որոշումներ կայացնելու ունակությունը պարզելու համար)՝ 0-5 միավոր:

Քննությունն ընթանում է նախապես հայտարարված թեմաների շրջանակում՝ հարցատուներով:

«Հայոց լեզու, գրականություն» առարկայի քննության գնահատականը մրցութային միավոր չէ:

021503.01.6 Դերասանական արվեստ

(դրամատիկական թատրոնի և կինոյի դերասան, երաժշտական թատրոնի դերասան*)

2018թ. ընդունելության ծրագիր

Պիեսներ

- 📖 Սոֆոկլես «Անտիգոնե»
- 📖 Վ. Շեքսպիր «Ռոմեո և Ջուլիետ», «Օթելլո»
- 📖 Ժ.-Բ. Մոլիեր «Տարտյուֆ»
- 📖 Ֆ. Շիլլեր «Ավագակներ»
- 📖 Հ. Իբսեն «Ժողովրդի թշնամի» («Դոկտոր Ստոքման»)
- 📖 Ա. Պուշկին «Փոքրիկ ողբերգություններ»
- 📖 Ա. Գրիբոյեդով «Խելքից պատուհաս»
- 📖 Ն. Գոգոլ «Ռևիզոր»
- 📖 Ա. Օստրովսկի «Եկամտաբեր պաշտոն»
- 📖 Ա. Չեխով «Երեք քույր»
- 📖 Գ. Սունդուկյան «Պեպո»
- 📖 Հ. Պարոնյան «Պաղտասար աղբար»
- 📖 Ալ. Շիրվանզադե «Պատվի համար»
- 📖 Դ. Դեմիրճյան «Քաջ Նազար»

Դերասաններ

- | | |
|---------------------|------------------------|
| ✓ Վահրամ Փափազյան | ✓ Սոս Սարգսյան |
| ✓ Հրաչյա Ներսիսյան | ✓ Արմեն Զիգարխանյան |
| ✓ Ավետ Ավետիսյան | ✓ Վլադիմիր Մսրյան |
| ✓ Մհեր Մկրտչյան | ✓ Վարդուհի Վարդերեսյան |
| ✓ Խորեն Աբրահամյան | ✓ Գայյա Նովենց |
| ✓ Մետաքսյա Սիմոնյան | |

Այլ թեմաներ

- ✓ Կոնստանտին Ստանիսլավսկի
- ✓ Հայ կինոյի հիմնադրումը. Հ.Բեկնազարյան
- ✓ Հայազգի անվանի նկարիչներ. Հովհ.Այվազովսկի, Մ.Մսրյան, Մ.Ավետիսյան, Վ.Սուրենյանց, Ե.Քոչար

- ✓ Հայ անվանի կոմպոզիտորներ. Կոմիտաս, Ա.Սպենդիարյան, Ա.Խաչատրյան, Ա.Բաբաջանյան
- ✓ Ա.Թամանյանի ճարտարապետական կառույցները
- ✓ Գ.Նարեկացի «Մատյան ողբերգության»
- ✓ Հովհ.Թումանյանի, Եղ.Չարենցի, Վ.Սարոյանի ստեղծագործությունները
- ✓ Վերածննդի դարաշրջանի նկարիչներ. Լեոնարդո դա Վինչի, Միքելանջելո, Ռաֆայել
- ✓ Երևանի թատրոնները (Խաղացանկը), մշակութային օջախները, հուշարձանները

Առաջարկվող գրականության ցանկ

1. Հայկական Սովետական Հանրագիտարան
2. Театральная энциклопедия
3. Տարբեր տարիներին հրատարակված ալբոմներ և ժողովածուներ՝ նվիրված արվեստի և գրականության ականավոր գործիչներին
4. Ստանիսլավսկի Կ. «Իմ կյանքն արվեստում», Փափազյան Վ. «Հետադարձ հայացք», 2 հատոր

Երաժշտական թատրոնի դերասան մասնագիտացման համար նախատեսվում է նաև լրացուցիչ գրականություն

- ✓ Янковский М. “Искусство оперетты”

Կոմպոզիտորներ

- ✓ Ժակ Օֆենբախ
- ✓ Յոհան Շտրաուս
- ✓ Արտեմի Այվազյան
- ✓ Տիգրան Չուխաջյան

Օպերաներ

- ✓ Ջուզեպպե Վերդի «Օթելլո»
- ✓ Լեոնարդո Բերնսթայն «Վեսթսայդյան պատմություն»
- ✓ Յոհան Շտրաուս «Չղջիկ»